ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«26» ապրիլի 2017 թվականի № 56-Ն

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 58-րդ հոդվածով, հիմք ընդունելով ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի փետրվարի 9-ի թիվ Ֆ-36/17 գրությունը և «Քարաշեն Ցեմենտ» ՍՊ ընկերության 2017 թվականի փետրվարի 7-ի դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Քարաշեն Ցեմենտ» ՍՊ ընկերությանը տրամադրել հանքային իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման հավաստագիր:
2. Ուժը կորցրած ճանաչել՝ «Քարաշեն Ցեմենտ» ՍՊ ընկերության ՀՀ Սյունիքի մարզի Քարաշենի մարմարացված կրաքարեր հանքավայրի շահագործման համար, 2012 թվականի ապրիլի 12-ին տրամադրված օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/146 թույլտվությունը, լեռնահատկացման թիվ ԼՎ-146 ակտը և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-146 պայմանագիրը:
3. Ընդերքի գործակալության պետին՝
- 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը հրաժարման հավաստագիրը ստանալու մասին.
- ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:
4. <Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի տնօրենին ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:
5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:
6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ